Սմբատայ և Երուանդայ յաղագս ապահովելոյ ղգոյութիւն վանական ուսումնարանի վանիցն Ս. Ստեփաննոսի, որ ի Սաղեան՝ տասն հազար ռուբլի դրամագլխով։

—

Ի 25 յունվ. 1889 ամի ընդ համարաւ 12, Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Նոր-Նախիջևանցի Նիկողայոս աղայի Աստուածատրեան Սարիեանց, յաղագս հոգալոյ զծախս երկրագործական Մասին ժառանգաւորաց ուսումնարանի վանից Սրբոյ Խաչի՝ որ ի Նոր-Նախիջևան, վճարելով ի պահպանութիւն նորին ի տարին հազար հինգ հարիւր ռուբլիս։

—

Յ30 Ցունվ. 1889 ամի ընդ համարաւ 54. վկայական Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Գերապատիւ Երեմիա Եպիսկոպոսի՝ միաբանի վանիցն Սրբոց Ցակոբեանց որ յԵրուսաղէմ, որով շնորհէ նմա զպատիւ Արքեպիսկոպոսութեան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ՑՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Ի տեղեկութենէ քննչացն ուսումնական և տնտեսական մասանց կառավարութեան Ներսիսեան աղգային հոգևոր դպրոցի Տփխիսոյ՝ մատուցելոյ Վեհափառ Հայրապետի Ազգիս և ի Նորին Սրբութենէ յանձնելոյ Սինոդիս՝ երևեցաւ զի յընթացս 1882 ամի 2695 ռուբլի 77 կոպէկ դպրոցային գումարն ի կորուստ մատնեալ է յանհոգութենէ հոգաբարձութեան նորին, տյլև ի վախճանի 1887 ամի յընդհանուր գումարաց դպրոցին պակասեալ է 1056 ռուբ. 68 կոպ. ուստի՝ Սինոդն հրամանագրութեամբ ի 20 դեկտեմբերի անցեալ 1888 ամի ընդ համարաւ 4389 հրամանագրեաց հոգաբարձութեան Ներսիսեան հոգևոր դպրոցի Հայոց Տփխիսոյ վճարել ի կորուստ մատնեալ 2695 ռ. 77 կ. դպրոցային դրամն ի սեպհականութեանց նախա-

գահի և անդամոց իւրոց. և երկրորդ՝ վասն 4056 ր. 68 կ. պակասելոց յընդհանուր գումարաց ի վախճանի 1887 ամի տալ բացատրութիւն առանց յապաղանաց։

—

Ի 28 Դեկտ. Սինոդն Սրբոյ Էջմիածնի ըստ յայտարարութեան փոխանորդի թեմական Երևանայ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսի, ի 26 օգոստ. 1888 ամի համ. 665. թոյլատրեաց նմա զծխական եկեղեցական միդասեան դպրոց Տաթևու վանից դարձուցանել յընծայարան հասակաւոր քահանայացու դպրաց նոյն վիճակի, առ ի վարժել զնոսա ի կարևոր առարկայս եկեղեցական գիտելեաց, թողլով ի վերայ աշակերտելոց զսնունդ իւրեանց, և զվարձ ուսուցչացն ի վերայ վանից. իսկ զծխական դպրոցն փոխադրել ի գաւիթ եկեղեցւոյն Տաթև գեղջ, որ առաւել նպաստաւոր է ուսուցչաց և աշակերտաց երթևեկելոց ի դպրոց։

—

Յ30 դեկտեմ. Սինոդն Սրբոյ Էջմիածնի ըստ յայտարարութեան Կոնսիստ. Երևանայ ի 19 դեկտ. 1888 ամի համ. 4314« որով միջնորդէ ի յարգանս թախանձանաց ժողովրդոցն Աշտարակ. գեղջ՝ արձակել զԳրիգոր քահանայն Տէր Գրիգորեանց որ ենթարկեալ էր վեց ամսեայ ապաշխարանաց վասն ապօրէն պսակակատարութեան Նորա. հրամանագրեաց նմին թոյլ տալ Գրիգոր քահանային շարունակել զքահանայագործութիւն իւր։

—

Ի 16 Յունվ. Սինոդն Ս. Էջմիածնի. ըստ յայտարարութեան Վիճ. Կոնս. Տփխիսու, ի 24 Հոկտ. անցելոյ ամի համ. 4639, զչհաս պսակն Մուխրանցի Անտոնի Ղազարեան Նահնազարեանց ընդ Սօնայի Գէորգեան Բերինեանց, անվաւեր համարելով, հրամանագրեաց նմին զպսակադիր Յովհաննէս քահանայն Դէմուրեանց արգելուլ ի քահանայագործութենէ և ենթարկել վեցամսեայ ապաշխարանաց ի վանս Հաղբատայ։

—

Յ30 յունվ. Սինոդն Սրբոյ Էջմիածնի ըստ յայտարարութեան փոխանորդի Հին Նախիջևանի Յ9 յունվ. համ. 5 վասն գայթակղեցուցիչ ընթացից և անհոգութեանց Յակոբ վարդա-

պետի վանահօր Նախավկայի առ պահպանութիւն վանից ի բա-
յրեզարդ վիճակի. արձակեաց զնա ի վանահայրական պաշտօնէ
և հրամանագրեաց Հոգ. կառավարութեան Նախիջևանի առա-
քել զնա ի Ս. Էջմիածին առ ի ունելոյ ընդ խիստ հսկողութեամբ
յուղղութիւն նմին, իսկ ի տեղի նորա կարգեաց վանահայր
զբարեշ. Ստեփաննոս վարդապետն Իսկանդարեանց։

—

յ30 Յունվ. Սինոդն Ս. Էջմիածնի, ի յարգանս բազմագիմի
թախանձանաց ժողովրդոցն Դիլիջան աւանի, ըստ բարեհաճ
կամաց Վեհ. Հայրապետի աղգիս, բաւ համարեալ զապաշ-
խարանս Յարութիւն քահանայի Տէր Գրիգորեանց՝ որ վասն
ապօրէն պսակակատարութեանց նորա. թոյլատրեաց նմին շա-
րունակել զիւրն քահանայագործութիւն։

—

յ8ն Փետրվարի տարւոյս Սինոդն Սրբոյ Էջմիածնի լուաւ
զյայտարարութիւն վանահօր սրբոյն Գրիգորիսի Ամարասու վա-
նից վիճակին Ղարաբաղու յ9ն Յունվարի տարւոյս և զինդիր
հայ ժողովրդեան վանքապատկան Գանձասար գեղջ, որք վասն
քայքայման շինուածոց վանօրէիցն, անխնամ դրութեան կա-
լուածոց նոցին, թշուառ և աղքատ կառավարութեան վանա-
հարց և միաբանիցն. ուստի հիմնեալ ի վերայ 22րդ յօդուա-
ծոյ ը. պարբերութեան կոնոնադրութեան թեմական Դպրո-
ցի Նուշշոյ և հրահանգութեան 115 յօդուածոյ Բարձրագոյն
կարգադրութեան յաղագս կառավարութեան Լուսաւորչական
Հայոց եկեղեցւոյ՝ եզրակացոյց յետս ստանալ ի հոգաբարձու-
թենէ թեմական Դպրոցի Նուշշոյ զիրաւունս կառավարութեան
վանօրէից և յտնձնել վիճակային կոնսիստորիայի տեղւոյն, որ-
պէս զի վերջինս ի գործ դիցէ զարդիւնս վանօրէիցն ի նորոգու-
թիւն շինուածոց, ի կառավարութիւն վանահարց և միաբա-
նից նոցին և ի նպաստ դպրոցին Նուշշոյ։ Եւ զայսմանէ հրամա-
նագրեաց ի 11ն սոյն փետրվարի համարօք 707 և 708, վիճա-
կային կոնսիստորիային Ղարաբաղու և Հոգաբարձութեան
դպրոցին վասն կատարման